

Հ Ա Ս Ց Ի

Rédaction du Journal arménien

ARCHALOUYCE

(EGYPTE)

LE CAIRE

# ԱՐՄԵՆԻԱՆ

ՊԵՏՄԵՆԿ

ԵՂԻՊՏՈՍ

Տարեկան դրոշմը

30

ԱՐՄԱՍԱՄԱՆ

Տարեկան գրանց

10

Փոստատարի 3ԱԻԵԼՈՒԱԾ ԵՆՈՐ լիցենզիայի վերաբերյալ գրեմ պիտի ըլլան.

Գրքերի և թերթերի վաճառքի համար

Ձի հրատարակչու ձեռագրերը  
և չե՛ն օրոշիր :

ԱԶԳԱՅԻՆ . ԳՐԱԿԱՆ . ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԿԱԽ ՀԱՅԱԹԵՐԹ

ՕՐԳԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆԿԱԽ ՄԻՈՒԹԵԱՆ

Թե՛ ԱՐՇԱԼՈՅՍԻ և թե՛ ՏՊԱՐԱՆԻՆ  
վերաբերեալ նիստախոս խնդրոց հարևար  
պիտի է դիմել նիստախոսական հասցեով  
քերթիս Մասսահարախին , որ է՝

ՊԵՏՄԵՆԿ ՓՈՒԿԱԶԵԱՆ

ԿԵ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԾԱԲԱՐ ՕՐԵՐԸ

Յօդուածագրի մեր ազգային դաստիարակումը

ZUSE 20 ՓԱՐԱ ՈՂԸ

## ՍԿԻՆԻՔՍ



### ՄԻ ՔԱՆԻ ԽՕՄԻ

ԱԶԳ . ԳԱԼՍՏԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԻ  
ՄԱՍԻՆ

(Մաքրեմ, Հայեր, Մաքրեմ)

Անկողնակալութիւնը պարտ է  
կր ղեկ մեր վրայ հրատարակել յիսապայ  
գրութիւնը, որ յուր և հարաւսի աղբիւրի  
կը բոլորի :

Եւ արդարեւ՝ ազգային հաս-  
տատարին մէջ որուն համար տարեկան  
20000 արեւի ունիներ կը ծախսուին ,  
նկարագրուած աստիճաններուն մէջ երեսի  
վրայ ձգուած բողբոջ՝ ո՛չ միայն ազգա-  
յին սնունդի յարստացումը զարգացնու  
նկողնակալ ըզրոյ կը եշտակի , այլ և  
մեր գաւախներուն դաստիարակութեան  
համար զգալի մասնակցութիւնը ,  
որ՝ բացառելու հարկ չկայ թե՛ դիպի  
ն՛ր անկողնակալութիւնը կրնայ առաջնորդել  
մեր ապագայ նախնիները :

Մեկ հրատարակչու սոյն զը-  
րութիւնը , ազգային իշխանութեան , և  
Գաւախական վարժարանի յարգելի Տնօրէնին  
ուշադրութիւնը յարկ կուզենք դիմել ազ-  
գային ղեկակալութեան կրթական փափակ գոր-  
ծը , որուն կարեւորութեանը վրայ շեշտը  
բոլորովին աւելորդ է : ՍԻՄ :

Ազգային Գաւախական վարժա-  
րանի բարոյական , կրթական և ու-  
սումնական տեսակետով բարձր ու  
նշանակելի մակարդակի մը տիրա-  
նալուն ճշմարիտ Կարգաւարտութեան  
ներքին մին ըլլալով՝ չեմ կարող ,  
ն՛վ հայեր , լուծեան թանձր վարու-  
գոյրին տակ թաղել այն ամեն պա-  
կասութիւնները , զոր տեսեր եմ  
բաւական ատենէ ի վեր :

Ձի լուր ճշմարտութեան առջեւ՝  
մեծ արարք մըն է՝ որ երեւան կը  
հանէ վրան ու լաւը , ու թոյլ կու-  
տայ առաջինին ոչնչացման և երկ-  
րորդին ընդլայնման աշխատելու :  
Նախնաճառ , չար և չահարկա-  
կան ողիք մը զբողուած քննադա-  
տութիւն մը չէ ընելիք և ոչ ալ անձ-  
նական արժանապատուութիւններ  
վերաբերելու գիտաւորութիւն մ՛ է  
ցայց տալիքս . այլ ճշմարտութեան  
թիւն մը որ , կը յուսամ իր լու-  
հեանքները պիտի ունենայ զայն  
գնահատուցելու չըջնակի մէջ :

Ձի հետաքրքրող վարժարա-  
նի կրթական և բարոյական վիճակն  
է՝ քան թէ նիւթական ու ուսում-  
նական : Նիւթական համար ըսե-  
լիք ու է բան մը չընելիմ , որով-  
հետեւ հաստատ համոզուած եմ թէ՛  
պէտք եղածէն աւելին կը ծախսը-  
ուի , իսկ գալով ուսումնականին .  
վերջնապէս փոքրիկ քննութիւն մը

նեղով սա եզրակացութեան հասեր  
եմ թէ՛ վարժարանը նախորդ տա-  
րեկէն աւելի յառաջդիմած է այս  
տարեշրջանի մէջ , ինչ որ գովելի  
է և գահաճանկութեան արժանի ... :

Սակայն նկատելով թէ՛ մեր  
վարժարանը նախակրթարան մ՛ է և  
աչքի առջև ունենալով նախակրթ-  
արանի մը բուն իսկ նպատակը ,  
որ է աշակերտներու նկարագիրը  
կազմելը , պիտի տեսնենք թէ՛  
Գաւախական վարժարանը ինչո՞ք ու  
կրնայ վիճակի մէջ է ... :

Ըստ իս գաղտնի մը վերացական  
վիճակը դրեթէ շարժարձակապէս  
կարող ունի անոր ուսուցչական  
մարմինէն : Աւստի մեր Ազգ . վար-  
ժարանի ինչո՞ք ու կրկնութիւնը ըս-  
տադելու համար , լրջօրէն քննենք  
անոր ուսուցչական մարմինը ( ) :

Մտնենք նախ մանկապարտե-  
զը՝ որ կրթական ասպարէզին հիմն  
է կամ արժաւոր : Հին մանկապար-  
տիչու հիմնընդհար զերը պէտք է կա-  
յանայ նիստ ու կայի , դիմագծա-  
կան արտայայտութեանց , արտաքին  
ձեւերու , քան թէ պոռալու , ճառե-  
լու , յանդիմանելու մէջ : Սակայն  
մեր մանկապարտիչպանու հիմնընդ-  
հարը ասկէ բոլորովին տարբեր է :  
Մանուկներուն հոգեկան վիճակին  
մասնաւոր ուղղութիւն մը տալու  
ու է արտայայտութիւն մը չու-  
նին . մին կը պոռայ , կը կանչէ  
պղտիկներուն փոխանակ sympathie  
ի վրայ ներշնչելով , ինչ որ բոլոր-  
ովին հակամանկավարժական է . ու-  
րիշ մը տեղէն շարժելու անկարող ,  
յայտած կը նստի փոքրիկներուն  
փոռվումն ու կայտառ կեանքը նե-  
տահարելով : Երրորդ մը չեմ գի-  
տեր ինչ բանէ յոտաջ եկած տրի-  
բութեան մը մէջ խորատուրում  
դէմքը ծուռ կը կենայ մանուկնե-  
րուն ժպտող ոչնչացիւով :

Այսպէս մանկապարտիչպանու-  
հիմնընդհար մէն մի վաստ արտայայ-  
տութիւնները տղայաց հոգեւոյն մէջ  
իրենց ամբողջութեամբ գտնելով՝ մեր  
մանուկները կ'ըլլան այսօր օրէն  
առաջ ծերացած էակներ ... : մե՛ծ  
խեղճութիւն չիտակը ... :

Մանկապարտեզէն ալ աւելի  
ցուալի , ինչո՞ք ու փոսած վիճակ  
մը ունի աղբիւրի նախակրթարանը .  
Հին վարժարանի պատերէն ներս՝

( ) Մ . Խ . — Անհարկուած ու-  
սուցիչ և ուսնիւրուն նկատողու-  
թիւնները անկողնակալութեան պիտի  
հրատարակուին այս էջերուն մէջ :

ՍԿԻՆԻՔՍԻ հրատարակութիւնը նոր յրացում գտաւ մը չէ . 1900  
ին ձեռնարկութիւններ և դիմումներ ըրած՝ և նոյն ատենուան կազմած  
ճրագրին համարատարան նիւթէր հատարած էի , սակայն ինչ ինչ  
պատճառներ և դժուարութիւններ արդեւք հանդիսացան այդ նպատակին  
իրագործումին :

ՍԿԻՆԻՔՍԻ նման պատկերազարդ գիրքի մը հրատարակութիւնը , մա-  
նաւանդ 96ի գաղթական հասանքին դէպի Եգիպտոս արշաւելէն յետոյ ,  
խիստ շահեկան պիտի ըլլար : Բայց կարճը և օգտակար ու ճոխ բա-  
վանդակութեամբ ներկայանալի հատար մը՝ որ շատ մը հետաքրքրական  
յիշատակներ պարունակէ իր մէջ , հրատարակին յանձնելու համար , իւր-  
թական լայն միջոցներէ զտա՝ նոյնպիսի ալ արամազրելի ժամանակի կը  
կարօտէր , ինչ որ պակասեցաւ ինձի , իրերայաջարգ կնճապից դէպքերու  
յաճախումին պատճառաւ ... :

Հիմայ այդ դժուարութիւնները հարթուած են , մասամբ ժամանակին  
եւ և զլուսաւորապէս կարեւոր տեղերէ խոստացուած նիւթական և բա-  
րոյական օժանդակութեանց շնորհիւ , այնպէս որ՝ սոյն ձեռնարկին յա-  
ջողութեամբ պակասելը ամեն տարակցոյէ հետի կը մնայ :

Թէ ինչո՞ւ այսպիսի հրատարակութիւն մը . տար պատճառները աւե-  
լի յարմար տալիս պիտի բացատրուի , գրքին մէջ մանաւորապէս գրա-  
ւելու պայմաններուն հետ : Առ այժմ ՍԿԻՆԻՔՍԻ կազմին գլխիցն հրատա-  
րակութեան տալով , նպատակ ունիմ անոր հեղինակ Տիար Երուանդ Տէ-  
միրճեանի ճարտար գրքին արդիւնքը երեւան հանել , և այս առիթէն օգ-  
տուելով հրատարակչին շնորհակալիք յայտնել ըստհամար արուեստագէտ  
հայ երիտասարդին :

Թեթևաբան, այլապես չէր կարող լինել մեր կողմէն: Երևակայեցէ՛ք վարժուհիներու խմբակ մը՝ որ առնուգրկիտեղէն կ'այլապատէ մեր ազնկները իր արասքին տեսքով, շարժումով եւ նիստ ու կացով: Անգլուհի մը՝ որ հետու անդրազան լրջութեամբ իր նստումով, քալուածքով եւ խօսուածքով մեր սանուհիները մէկ մէկ թեթև բաներ կը դարձնէ: Վարժուհիներ՝ որոնցմէ մին, մանկավարժութեան վրայ փոքրիկ գաղափար մը իսկ չունենալով՝ փորձառուի, դիտողական հոգիք առած, աշակերտուհիներուն Տնօրինութեան դէմ ըմբոսս ուղի մը կը ներշնչէ, միւս վարժուհիներուն պակասութիւնները չի տեսածէն գալով՝ զանոնք իր ձեռքին մէջ կ'առնէ: Երկրորդ մը՝ որ իր անճոռնի տօլետով, մազին շակուածքով դէմքին վրայ ծեփուած մէկ մաս չպարուլ, զարգարանքով, չեմ գիտեր ալ ուրիշ ինչով մեր աշակերտուհիներուն առջև զլուծել օրինակ մը կը հանդիսանայ:

Երրորդ մը՝ որուն գործն է օրն ի օրն քննանալ եւ զարմ տեսնել իր խոստովանութիւնը կատարուել վրտութեան օճակ մը: Ընթերցողք՝ եւ մեր ազնկները իրենց վարժուհիներուն մէկ մէկ պատկերը եղած են այսօր:

Ինչու կ'անջուտ են մեր վարժուհիները: Մենք անոնցմէ մեծ ուսումնական արգիւնքներ չենք սպասեր: մեր վարժարանը նախապէս կը խնայուի մեծ ասկային մենք անոնցմէ կը պահանջենք սանուհիներուն մէջ բարձր նկարագիր մը դուրս գանցել, եւ առ ալ մագիւրնուն ձեռք, երեսունն ալիւրը, հապուտունն գոյնը ցցնելով, թեթև բարբերին սե հոգեբանութիւններն երևան հանելով չ'ըլլաք:

Ինչ է իրենց պաշտօնը՝ եթէ ոչ ծնողներուն օգնել ազնկանց կըրթութեան գործին մէջ: բայց ո՛ր է օգնածին... Ինչու համար չեն խօսիր, չեն յանդիմաներ երբ հանդէսին օրը ազնկ մը հովհարը վզին կախած՝ բեմ կ'ելլէ, կամ ուրիշ մը չպարուած, ներկուած ժողովրդին առջև կը հանդիսանայ... Մենք պէտք է խօսիր, Տնօրէնը պէտք է խօսի այս մասին... Մ'չ վարժուհիները չեն կրնար դիտողութիւն ընել՝ որովհետեւ անոնք ալ միևնույն դիրքին մէջ կը դասուին: Ահա՛ տեսէ՛ք, ծնողներ, ձեր ազնկները որոնց յանձնած էք... մէկ մէկ չար օրինակներու ըլլալ անվայելութեան, ըլլալ արատաւոր սե հոգեբանութեան մը տեսակէտով:

Վկայականաց բաշխման հանդիսին օրը առանց հետաքրքրուելու թէ՛ ճա՞ն է արատանուածը, ե՞րբ է երգուածը, բանախօսութիւն է եղածը, մեր illustres վարժուհիները մէկ անկիւն քաշուած իրենց ճամբարութեան, արձակուրդի ֆեյժիկն եւ սպառնայ յայտնուել վրայ շատախօսէն զատ ուրիշ բան չըրին: Ահաւասիկ օրինակ մը՝ որ սանուհիներուն թղլատրեց ազնկանց կերպով հանդէսին լրջութիւնը խանդարել, Առաջնորդին բանախօսութիւնը խափանելով:

Ի զո՛ւր կը փնտռեմ նշոյլ մը առաւելութիւն մեր վարժուհիներուն քով, ի զո՛ւր չ'ըլլաք զարմանալիքներն են:

Հիմա՞յ մեր քայլերը նետենք ազնկայ վարժարանի սեմէն ներս: Մեր ազնկն առջև պիտի չպարզուին ազնկանց կողմը տիրող յետին ծայր խեղճութիւնը: Վաստակները բաւականաչափ կը հետաքրքրուին իրենց գործով եւ կարելի եղածին չափ կը շնորհակալ զարձակուին: Սակայն ասոր հետ մէկ-տեղ անոնք ունին իրենց ինչ ինչ պակասութիւնները: Մի՛ն չեմ գիտեր ինչ համարումով ստանն անգլիկ բօdayogioի աւելարդութիւնը կը քարայլէ եւ անոր հաստատելով կը ցանկայ նահապետական այնպէսով վարել իր պաշտօնը, պաշտօն մը՝ զոր պէտք եղածին պէս հասկնալու կարողութիւնն իսկ չունի, եւ փրկութեամբ, բարոյապէս ու մտաւարտ պէս կատարուել ջուն է, փրանսերէնի դասատու մը որ թեթևութեան սիրահար մ'է, ուրիշ մը՝ որ չորհարած մեքենայի մը պէս տրոպ դաս կ'առնողէ առանց հետաքրքրութեամբ թէ՛ աշակերտք բան մը կը հասկնան թէ՛ ոչ...:

Հիմա՞յ այս բոլոր ճշմարտութիւնները երևան հանելէ վերջ ձեռք կ'առնուի խօսքը, ու զուր որ կը ցանկաբ գոչուցին յառաջգիւրդութեանը՝ ըլլալ բարոյապէս, ըլլալ ուսումնական կերպով եւ անով կը հետաքրքրուիք, ըսէ՛ք ինծի: Ի՞նչ կրնայ ընել տնօրէն մը եթէ մինչև իսկ երկիրքէն իջած մէկը ըլլալ ան: Արժէն խօսք թող հասկնան զո՞վ թող հեռացնէ, փուտը մէկ հատ չէ, երկու հատ չէ, երեք չէ...:

Մէկզի գնելով անձնական գրձու հայրները, շահախնդրական պախարակի զոչացումները, հայր՝, ծնողներ, ազնկաններ, նախանձախնդիրներ, հետաքրքրուիք: ձեռք ձեռքի սայլով՝ կամայ կամայ կարելի եղածին չափ մաքրե՛նք, մաքրե՛նք մեր վարժարանը հեռացնենք անկէ ունին անոնք որոնք բարոյապէս կը խոնարեն մեր մանչերն ու ազնկները, անոնց առջև վատ օրինակներ հանդիսանալով: Հարկաւոր մանուկներու սիրտին համար չի խնայեց ոչ մէկուն: Թող առէն որ աշխատի այս գործին...:

Ա. ՆԵՄՐԱ

**ՆՈՐ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆՆԵՐ**  
ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՇՈՒԱԿԱՆ  
ԽՆԴՐՈՑ ՎՐԱՅ

Տիրաբ քննիչք. - Ինչու Մանկունիի եւ Արիտի իր երթեւեկութեանց ծախս արուած 450 ոսկին երևան չէք հանած. տակաւին թո՛ղ զկանոնաւ կը գտնուիք: կաղաչեմ ըսէք, Պարէն մինչև երեսուցեմ 450 ոսկիներով կերթալ ու կողմայ մարդ մը: Ի՞նչ նպատակաւ արուած են այդ գրասենյակը:

2. Տիրաբ քննիչք. - սա Աւետիս ծառային հետ տարած հոգաբանքը ինչու՞ բնաւ չէք յիշատակած, որովհետ չանած էր այն գրասենյակը, որոց շնորհիւ այն կամեմը վառքը այս ցուալի վարժարանին հասցոց. քանի մը իրեն պէտքերն ետեւէն քաշելով եւ կարծրակ սկիւններով շարժելով:

3. Տիրաբ քննիչք. - կըսէ՛ք թէ՛ միւրամտութիւնը եղած զեզոռութիւնը

համար բողոքած չէ. երեւակայութեամբ կ'ըսէք կամ թէ՛ իրականութեամբ: Ինչպէ՞ս թի՛ք մը յողուութիւն յանձն առնէք: Ազգ. Պատրիարքարանի գիւղաները պարզեցէ՛ք, եւ ահա հոն զեզոռութիւնը պարզեցէ՛ք, հանրագրութիւններն էլ, եւն. պիտի գտնէք: եւ անգամ մը միայն հարցնէ՛ք թէ՛ ինչու՞ այս գրերը բնաւ երևան եւ ներկայի տեսնուած չեն, ի՞նչ թաքուն նպատակներու համար արգիւտք:

4. Տիրաբ քննիչք. - Ի՞նչ խղճով, եւ ի՞նչ տեսակ արգարութեամբ 70 երկար տարիներ ազնկն արգիւտաւորապէս ծառայող Պատրիարք մը՝ այսօր ձերութեան պատճառաւ ամբաստանելու կ'ելլէք: կաղաչեմ ըսէք. այսօր ի՞նչ օր մաթ անկիւնը այդ տեսակ անհեթեթ արգարութիւն մը ի գործ կը դրուի: Միւրամտութիւնը յանցանք մ'է արգիւտք:

5. Տիրաբ քննիչք. - Միւրամտութիւնը ամբաստանուած Տ. Գեորգ Արքեպիսկ. կըսէք: Երեսուցեմ Տ. Յարութիւն Ս. Պատրիարքին օգնական որչից իր իսկ խնդրելովը, կաղաչեմ ըսէք: Ի՞նչ թաքուն նպատակներու համար արգիւտքներ կը յարուցուին անոր կրօնապետ վերադարձին. 40 երկար տարիներ վաճառելու ազգին ծառայող բողոքականութեան մը այսպէ՛ս պիտի վարձարուէք: կիկ այս է ներկայի պահանջած արգարութիւնը, այլևս միւրամտութիւնը ի՞նչ արտով կ'անքք Երեսուցեմի մէջ անցնէ եւ Ազգին նախարարն իրաւունքները պաշտպանելու համար ինքզինքը միշտ վառնդի ենթարկէ:

6. Տիրաբ քննիչք. - Ի՞նչ օրէնքով եւ արգարութեամբ փերմանի Պատրիարքի մը՝ միւրամտութեան մեծագոյն մասին հեռադիւրս բողոքարարները, հանրագրութիւնները, վարչութեան եւ երեսփոխանական փողովայ կողմէ բնաւ նկատի չեն առնուի, ու սակայն իրենց կեանքով եւ բողոքական արարքներովը հանրաճանօթ, եւ տիրանալի փոքրամտութեան մը բարբառնանքներուն կարեւորութիւնը կը արուի: կաղաչեմ ըսէք ի՞նչ տեսակ արգարութիւն կը դատաւան է այս բանը:

7. Տիրաբ քննիչք. - կըսէք թէ՛ կեզոռնէն զրկուած քննիչները վաճառուած են, եւ ինչ թողած որ քննութիւն կատարեն: Ո՞վ ըսաւ թէ՛ վարժարանուած են, միւրամտութիւնը թէ՛ հանրագրութեամբ եւ թէ՛ բերանացի կեղծ քննիչներէն խնդրեց որ ազատ, անկողմնակալ, եւ անաչառ քննութիւն մը կատարեն. եւ ո՞վ որ յանցաւոր գանին ուղածուն պէս պատճեն. սակայն քննիչները խողտ միւրմեջին քննութիւն ընել. այս ազգին ազանց քննութեան, զոմն կարգալայ ընել զոմն վատել, զոմն պահպանել ընել, զոմն ամբաստանել եւն, եւն: այս տեսակ գործ կատարել քննիչի գործ է կամ թէ՛ « գահիճի », ներկայ ազատութեան չըջանին, միւրամտութիւնը ի՞նչ կըսէք խոնարճի գահիճներու աղջիկ ազգային իրաւունքները վառնդի ենթարկելով. վերջը ո՞վ պիտի ըլլար պատասխանատու ազգին ազնկ:

8. Տիրաբ քննիչք. - Միւրամտութիւնը միշտ ուղած է եւ սովորին կողմէ. զրկեցէք տնայաւ եւ անկողմնակալ քննիչներ թող զան արգարութեամբ քննութիւն մը կատարեն. եւ ո՞վ որ յանցաւոր գաղտնի յանձնեն ազգային իշխանութեան, եւ իշխանութիւնը ուղած կ'անկողմնակալ թող պատճէ, եւ բարկութեան ժայռ անոր վրայ թափէ: Այս չը պահանջէ՛ք արգարութիւնը կաղաչեմ ըսէք. եւ օրինականքն ալ այս չէ՛. եւ զձեռք առնէ առաջ պարտաւոր են երկու կողմն ալ լսել:

9. Տիրաբ քննիչք. - Եկող քննիչները անձնապէս որ հետեւել յատկութիւնները ունենան իրենց վրայ: 1. Բարձր իմացականութեան օճակ: 2. Բարձր անցեալ մը: 3. Երկրին աչքը, ձեռքը նայելու անազնիւ սովորութիւնը չունենան, 4. իրենց անձ-

նական ծախքով զան ու երթան: Ահա այս տեսակ քննիչներ երբ գան, եւ արգարապատ քննութիւն մը կատարեն ահա այն ժամանակ միայն պիտի վերջանայ Երեսուցեմի խնդիրը. եւ ամեն ոք ալ գո՛ւ պիտի ըլլայ, ազգն ալ պիտի ազատի: Ուրիմն սպասենք եւ յուսանք:

(Երեսուցեմ) ՄԱՇՏՈՑ

**ԾԱԽՈՒ ԳԵՏԻՆ**  
ՇԱՀԱՐԱՅԻ ՊԱՏՆՈՒԹԻՒՆ ԵՐ

Մէնչիկէլ-էլ-Սարի կայարանէն ճիշդ երեք վայրկեան հեռաւորութեան վրայ, օդատուն է երկու կողմերը ընդարձակ խճուղիներ շինուած, շրամարով միասին, հինգ կտոր ծախու գետին կայ, որոց տարածութիւնն է.

ԲՈՏ ԱՂԱՆԻ	
Թիւ 63 քաւ. մէջմը.	1079,18 ասնգ.
« 56 « «	1075, 85 «
« 61 « «	1098, 87 «
« 66 « «	1127, 79 «
« 71 « «	1146, 82 «

Թէ՛ միանուագ եւ թէ՛ մաս առ մաս գնել փափաքողները՝ հարկ եւ զոմն մանրամասնութեանց ծանօթանալու համար, առէն օր կէս օրէն մինչև ժամը մէկ, կրնան գիտել Արշալոյսի Տպարանը, Ծարա Ապո-էլ-Աղիւ, Երեւանի քաղաքի տեղին գիւմար:

Գինը գիւրամաշակի է:

**Ի ՀԱՆՆԻԱՐՏՈՒԹԻՒՆ**  
ԳՈՂԹՈՒԿՂԵԱՂ ՄՏԱՅ

Պղտոր ջուրի մէջ որպացոյնեբու կողմէ՛ անցեալ շաբթու, հայ համայնքին մէջ խեղճութեամբ եւ նպատակաւոր լուրեր տարածուած էին քաղաքի կարեւոր աւետարականներէն Մեծ, Տիրա Նշան Հաճէթեանի նկատմամբ, որպէս թէ գուցեմ գոհարեցնենք գնել ուղած եւ կամ իր գրաստանն առած ըլլալ:

Արդարեւ Տիրաբ Հաճէթեանեբու նման ընդարձակ գործառնութիւն ունեցող աւետարականներու կրնայ պատահել որ տարիներու ընթացքին մէջ խաղաղքներու զսնուելով մէկ երկու անկարեւոր անըզըւշութիւններ ըրած ըլլան, սակայն ծախսով գէպքին մէջ՝ ինչպէս կը հաստատուի, իրաւութիւնները բոլորովին տարբեր են, եւ Տիրա Նշան Հաճէթեանի շնորհիւ է որ թե՛ վիճիկի յայտնի կարեւոր գոյութեան հեղինակ՝ անհաստատ լիմ՝ սեւափոթ ծառան իր ընկերներով օճիքը ձեռք տուած է: Հեռաւորապէս այսպիսի պարագաներու մէջ մին կամ միւսը խօսքի նիւթ ընելէ առաջ, անհրաժեշտ է պաշտօնական ձեռնհաս ապրիւրներէ հաստատել ըսն իրողութիւնը եւ ըստ այնմ վարուել, ձրի անուանարկում փորձելու տալաւորութիւն շնորհելու համար: Մանօթ գէպքի մասին խօսուածները այս վերջին կարգին կը պատկանին: Եւ Տիրա Հաճէթեան աւելի վարձատրութեան արժանի է, ինչպէս տեղական թերթերը գրեցին:

ՍՏԱՆԱՅԻ ԴԵՊՐԻՆ ԿԼԵՄԵՆՏ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՆՈՒՆԵՐԸ  
ՉԵՐԿԱԿԱԼՈՒՄ

Տակաւին քանի մը օրեր հազիւ սահեցան, երբ Ատանայի նախորդ տխրահռչակ վալին ձէ-վատ, Պօլ սոյ թուրք թերթերէն Ռաւփիլի էմֆիլարի միջոցաւ կը պատասխանէր Յակոբ էֆ. Պապիկեանի յայտարարութեանց այն մասին թէ՛ Ատանայի Առաջնորդ Մուշեղ Եպս. մասնակցութիւն չունի կատարուած շարժումներուն մէջ:

ձէ-վատ վերադարձնելու համակարգ կը յայտարարէր որ՝ Կիլիկիան գէպընտուն մէջ, Առաջնորդին մասնակցութիւնը կամ ոչ և անոր պատասխանատուութիւնը ճշգրիտ պատերազմական տեսանկիւնը պարզ էր:

Իսկ Մուշեղ Եպիսկոպոսի Տեղեկագրին նկատմամբ դիտել կուտար նոյն նամակաւ թէ՛ նա կը պահանջէ եղբոր կարգ մը մարդոց արտաքսումը և շատ մը միւլթասըրներու և զայնազամներու փոփոխութիւնը: Առաջնորդին այդ տեղեկագիրը, կ'ըսէ վալին, իր տեսնին հարգուած է ներքին գործոց նախարարութեան:

ձէ-վատ պէջ յարելով թէ իր պատիւը ու խղճը չէ արատաւորած բանաստեղծութեան օրով իսկ, յոյս կը յայտնէ որ ճշմարտութիւնը երևան պիտի ելլէ ոչ կամ կանոյն, ու իր նամակը կը վերջացնէ ըսելով որ մինչև կեանքին վերջը պիտի հեծէ իր կուսակալ գանձուած տեղւոյն մէջ այդպիսի արիւնակի գէպը մը պատահած ըլլալուն համար:

Պապիլիար էմֆիլար հրատարակած է նաև կուսակալին կողմէ Ռուսուար 14 թուականու ներքին գործոց նախարարութեան ուղղած հեռագիր մը, որուն մէջ ձէ-վատ պէջ յիշատակելէ յետոյ թէ Առաջնորդին իրաւացի պահանջումները նկատարութեան առնուած են, կը յաւելու:

Առաջնորդ Մուշեղ Եպիսկ. կառավարական գործերուն կը միջամտէր և Բրիտանիայի գիւղերը պատեւելով կը գրգռէր ժողովուրդը՝ զինուորական և թաղապետութեան տարի չ'ընտրելու երևումը:

Անցեալ Ապրիլ ամսոյ սկիզբները Ատանայի կուսակալութեան կեդրոնը և շրջակաները ծագած ցաւալի գէպընտուն մէջ Ատանայի նախորդ կուսակալ ձէ-վատ պէջ, ձէ-վատ պէջը Պէրէքէթի Միւլթասարքի Առաջի պէջի, Ատանայի նախորդ զինուորական հրամանատար Մուսթաֆա Րէմզի Բաշայի պատասխանատուութեան պատիճանը ճշգրիտ համար, Ատանայի գրիտան թնիչ մարմինը այս անգամ Բ. Գրան յղած է տեղեկագիր մը, որ նախարարաց խորհուրդին մէջ կարգադրուեցաւ:

Այդ տեղեկագրին համաձայն, հաստատուած է որ յիշատակները իրենց պաշտօնի պարտականութիւնները արժանաւորուելու չ'որոշուած են և չ'արժագրեցուած են:

գէպընտուն առաջ ու ետքը հարկ եղած ազգու միջոցները ձեռք չ'առնելուն համար ցաւալի գէպը տարածուած է: Նաև հաստատուած է որ տեղւոյն բնակիչներէն Պաշտապի Ապրիլ Գառէր և Պօշնաք Սալիհ, Իրիսալ Լարայի խմբագիրներէն Իհան Ֆիքրի և Իսմայիլ Սաֆա էֆէնդիները անգործութիւնը խանգարող ընթացք մը ունեցած և հրատարակութիւններ ըրած են, ուստի յիշեալ բոլոր անձերը Ատանայի պատերազմական տեսնին առջև պիտի դատուին:

Նախարարաց խորհուրդին այս որոշումները պարունակող տեղեկագիր մը մատուցուած է Սուլթանին, որ Կոստանթնուպոլիս Երատէով վաւերացուած է, և ներքին ու պատերազմական նախարարութեանց զեկուցուած է, հարկ եղածը փութով գործադրելու համար:

Ատանայի ճշմարտութիւններն են արգարեալ որ երևան կ'ելլեն: Թող արևմտեայ ձէ-վատ պէջ ...

ԿՐԵՏԷ

Կրեաէի խնդրոյն առթիւ Երեսօրեայի ժողովին մէջ Պ. Տընի Բօշէն Արտաքին գործոց նախարար Պ. Բիշտի հարցապնդում ըրած է, որուն հետեւեալ կերպով պատասխանած է նախարարը:

— Կրեաէն 1897 փետրուարին, Սուլթանին կողմէ իբրև աւանդուածութեանց յանձնուեցաւ: Ատկէ յետոյ Առաջին Կրեաիսիան այդ միջոցում թեմէն քաջամբ ըլլալով, Անգլիական, Ֆրանսական, Ռուսական և Իտալական զինուորներ զբրկուեցան նոյն կղզին: Ելձմտական ապրիլները սակեմուեցան, տեղական ստանկան զինուորութիւն մը կազմակերպուեցաւ և այդ շրջանը խաղաղութեան շրջան մը եղաւ Կրեաի համար, հաջողեալ նմանութեամբ:

Երկրիս իշխանին կառավարութիւնը և յետոյ Պ. Զարմիսիւնը արժանի եղան Պ. Բօշէնի կողմէ արուած գովեստներուն: Չինուորները, ինչպէս տէրութիւնները խոտաւորուած էին, կէս առ կէս զեղջուեցան վերջին Յունուարին: Պաշտպան տէրութիւններն ալ սա որոշումը տուին: — Ա. Կղզիին մէջ իրենց ունեցած զինուորները եւ առնելու գործը Յուլիս 24 ին աւարտել: Բ. — Առաջարկութիւն մը ուղղել կրեաացիներուն ծանուցանելով թէ՛ տէրութիւնները չորս նաւեր պիտի թողան Սուտայի ծովածոցին մէջ՝ իրաց կացութիւնը ապահովելու համար: Գ. — Այս մտադրութեան պատճէնը հաւորեալ Բ. Գրան:

Տէրութիւնները ընտ. չեն հրաժարիր թուրքից հետ տեսակցելէ կրեաական խնդրոյն վրայ, սակայն այնպէս կը նկատեն թէ՛ յարմար ժամանակը դեռ հասած չէ: Թուրքից, Յունաստանի և Կրեաի շտաբայրութեան և իմաստութեան կրփասահին նոր գծուարութիւններ չի պատճառուելու համար: Արեւմ. յուսալից ենք որ խաղաղութիւնը պիտի չ'խանգարուի:

ԱՂԳԱՅԻՆ ԵՐԵՎԱՆ

ՀԱՆՐԱՊԵՏ

Հրապարակը զբաղեցնող ամենէն հրատապ խնդիրն է հիմայ Սարգիս Թաթարեան և ընկերաց թրքարարոյ առեւանգութեան գէպը:

Հետզհետէ ստացուած տեղեկութիւնները ամենամանր յայտնութիւններ են և մարդ կատիպիտի ականջները խցել, անձնօթ մը նալու համար անոնց մանրամասնութեանը:

Տեղական թերթերէն ուսանք Վերմակ գերիներու տուրեալ կանուաններն այս և նման առեւանգուածները, և խիստ ծանր սնով կը քննադատեն Առաջնորդարանի անտարբեր և թույլ ընթացքը, որ այս կարգի գէպընտուն առջև առնելու ջանքեր ընելու փոխան, իր ձախորդ որոշումներով կը քաջալերէ և կը դիւրացնէ ալ թաթարարարոյ առեւանգիչներու գործը:

Առեւանգ տեղեկութեանց նախընթաց, բոլորի հանրագրութիւններ կը պատրաստուին, պաշտօնական ձեւով հարցազրուեցաւ ու շտաբութիւնը հրախրելու համար այս կարգի անպատիւ արարքներու վրայ:

Ս. ՊԱՏՐԻԱՐԿ

Յուլիս 21 ին (Ն. Տ.) Ս. Պատրիարք Գուրգուր Մայր Եկեղեցոյն մէջ պատրուակելով, Արմաշի գաղթականաց նախկին տներէն ուսուցիչ Մանուկ Պետիկեանը քահանայ ձեռնադրած է Վառնայի Եկեղեցոյն վրայ, Տէր Համազասպ կոչելով զայն:

ՊԱՏՐԻԱՐԿԻՆԻ

Պատրիարքարանի կողմէ Ատանայի գրեւած պատուիրակները Իէնդիլը, Ար. Առաջնորդին և Սարգիս Սալին Ս. Պատրիարքին հետ տեսակցած են և մեկ երկու շաբաթէն իրենց անդեկագիրը Ազգ. Վարչութեան պիտի մատուցանեն:

ՀԵՆՈՎԻՐ

Երեսուցէ-մի Տէր Թարութիւն Ս. Պատրիարքը, իր Պօշտոյ փոխանորդին հեռագիր մը ուղղելով հրապարակուած տուած է փոխանորդարանի գործերը ամբողջովին Տէր Անանիայ Վրդ. Հաղարարպետեանի յանձնելով անմիջապէս գէպի երեսուցէ-մի ճամբայ ելլել: Փոխանորդ Եղիշէ Վրդ. Չիլիկիլեան Պատրիարք Սրբազանի այս հրահանգին անսամտել կուգէ կղեր ...

ՉԻՆ. ՏՈՒՐԿԸ

Ներքին գործոց նախարարութեան Պատրիարքարանի հարգուած ըլլալով թէ՛ ց'նոր սնօրհուութիւն զինուորական տուրքերը չ'զանձուելու համար նահանգային իշխանութեանց հրաման արուած է, Պատրիարքարանին հեռագրուեցաւ բոլոր առաջնորդներուն, անմիջապէս հեռագրով յայտնել նախարարական հրամանին հակառակ շտաբայրութեան անունները:

ՀԱՅ ԵՐԵՎԱՆԻՆԵՐԸ

Օմմ. Խորհրդարանի հայ երեսփոխանները զաւառական զլխաւոր կեանքներուն հեռուրով ծանուցած են Օմմ. Խորհրդարանին տուած որոշումը, Բրիտանիաներու զինուորական տուրքի ընդունումը (Մ. Խ. Խորհրդարանի հայ երեսփոխանները զաւառական զլխաւոր կեանքներուն հեռուրով ծանուցած են Օմմ. Խորհրդարանին տուած որոշումը, Բրիտանիաներու զինուորական տուրքի ընդունումը ...)

ամ որոշումը, Բրիտանիաներու զինուորական տուրքի ընդունումը (Մ. Խ. Խորհրդարանի հայ երեսփոխանները զաւառական զլխաւոր կեանքներուն հեռուրով ծանուցած են Օմմ. Խորհրդարանին տուած որոշումը, Բրիտանիաներու զինուորական տուրքի ընդունումը ...)

ՍԱՆՆԻ ԼՈՒՐԵՐ

(Պօշտակով)

— Սուլթան Մէհմետ Ե. գէպի նահանգները ուղեւորած ատեն, մեծ Եպարքուր իբրև տեղակալ Պօլիս պիտի մնայ:

— Ատանայի մէջ շէնքերու և կեանքի ապահովագրութեանց համար ընկերութիւնները 800,000 սոկիլի փաստ ունին, զոր շէն ուղեր հատուցանել: Միջազգային օգնութեան Յանձնաժողովը և Հայոց Պատրիարքարանը կ'աշխատին համոզել ընկերութիւնները որ այդ վճարումը կատարեն, հակառակ պարտապիտան գառ պիտի բռնան եղբոր ընկերութիւններուն գէպ:

— Յունաց Տ. Ետարիմ Պատրիարքը ժողովին մէջ Թուրքերէն ընդունով Լարայի մը հրատարակութեան պէտքին վրայ ընտարած է, Իսլամներուն միտքը ընտարանելու համար յոյն հատարակութեան գործերուն ճշգրիտ կացութեան վրայ:

— Ներքին գործոց նախարարը Պօլիս միջազգային օգնութեան յանձնաժողովին աւագաններուն հետ ունեցած տեսակցութեան մէջ, յայտարարած է թէ՛ յաջորդ օրուան նախարարաց ժողովին մէջ պիտի որոշէ 100,000 սոկիլի վարկ մը պահանջել Երեսփ. ժողովէն, Ատանայի մէջ արած տուներու շինութեան յատկացնելու համար:


— Տէր պանքի սնօրէնը, Պ. Նիֆ, Սելանիկ ուղեւորած է, 14 սնուակ գրած և արժեթղթեր և Օմմ. Պանքային 600,000 սոկիլի Ապրիլ Համալի յանձնելով հաւաքական ստացագիր մը առնելու համար:

— Կըսուի թէ՛ Ապրիլ Համալի չէ՛ ընդունել պանքաներուն ներկայացուցիչները, ըսելով որ իր հարստութիւնները ի թէ՛ յանձնուին իրեն, կեանքը ապահովութեան մէջ չ'պիտի ըլլայ:

— Ապրիլ Համալի ծառայողներէն ու յիմնապետներէն 33 հոգի, որոնք նախապէս Արեւա արտուած էին, Կ. Պօլիս ժամանած են և ստիկանութիւնը անոնցմէ ապահովութիւններ առնելով արձակած է:

— Հանրօգուտ շինութեանց նախարարութիւնը բոլոր նահանգները ծանուցած է որ անորոք մարդերը ճամբաներու և ուրիշ հանրագուտ շինութեանց մէջ աշխատցնեն (Մ. Խ. անշուշտ ձրի և անօթի ծառայ ...)

Ատանայի որբերը որք յերուսողէ՛մ տե՛ս չորրորդ երեսը:



ԿԱՐԱՊԵՏ ԳԱՍԱՊԵԱՆ

ՇԱՐԱ ՄՈՋԱՄՄԷՏ ԱԼԻ, ՏԱՐՊ - ԷԼ - ԷՆԱՊԱ ԹԻԻ 1

ԿԵՄԷ ԷԼ ԿՈՒՂՐՈՄ ՄՉԿԻԹԻՆ ՃԻՇՏ ԴԻՄԱՏ

Երկար տարիներ կարեւոր տուներու մէջ աշխատելով փորձառութիւն ստանալէ յետոյ, այժմ իր սեփական վաճառատունը ունի, ուր կը վաճառուին թէ՛ նոր և թէ՛ գործածուած կարի մեքենաներ ամեն տեսակէ, միջոց առաջնակարգ քաղաքացիներու ապրանքները ընտրելով կը գնէ կամ նորերու հետ կը փոխանակէ կարի հին մեքենաները:

Նորագոյն կառուար երբ պէտք ըլլալ, յաճախորդաց տուները կայքէջէ և իր կատարած նորոգութիւնները տարիներու համար կ'երաշխաւորէ: Կը վաճառէ նաև ամեն տեսակ կապի վառարաններ և ամանց նորոգութիւնները կ'ընէ անմրցելի յաջողութեամբ և դիւրաւ: Իրեն զինուղ բոլոր յաճախորդներն ալ գոհ պիտի մնան:

# ՄԵԾ ՎԱՃԱՌՆՈՒՆ ԾԻԱԽՈՏԻ

## ԵՒ ԸՆՏԻՐ ՍԻԿԱՐԵԹՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ՎԱԿԶ - ԷԼ - ՊԻՐԲԷ ՓՈՂՈՑ ԷՕԶՊԷՔԻՅԷ



# ՍԵՓԱԿԱՆՏԵՐԲ

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐԲ

ՅԱՏԿԱՆԵՐԸ ԻՐԵՆՑ ՎԵՐԱՊԱՀԵԱԼ Է .

Արեւելեան ընտիր ծխախոտներէ պատրաստուած թարմ սիկարէթներ անմրցելի ածան գներով ունենալու կամ վախճելու համար, ամէն անգամ և ամէն տեղերէ աւելի՝ պէտք է նախընտրել մեր վաճառատունը .

Առաջնակարգ տեսակներէ Եւրոպական սիկարէթներու լաւագոյն զանազանութիւնները պահելու համար հարկ չ'կայ հոս ու հոն ժամապահառ ըլլալու . բաւական է անգամ մը անպատճառ այցելել մեր վաճառատնին .

Պարսկական ամենաընտիր թէմպէքիի սյլ և սյլ սիսակները բացի մեր վաճառատունէն, ուրիշ տեղերէ գնելը պարզապէս սխալիլ է .

Մեր վաճառատունը մերջապէս, զինքնու ածանութեամբ, տեսակներու բազմազանութեամբ ու ճոխութեամբ և այլ ամէն տեսակէտներով, և մասնաւոր գործածել որոշած ապրանքներուն թարմութեամբը անմրցելի է, որուն անտրտելի ապացոյցներէն մին ալ ըզրգայած եւրոպացիներէ օրըստօրէ մեծ քանակութեամբ և սառար թուով եղած յանձնարարութիւններն են .

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐԲ

### ՆԱՍԱԿ ԵՐՈՒՍԱՂԷՄԷՆ

ԿԻՒԿԵՑԻ ՏԱՍԸ ՈՐԲԵՐ ՍԵՐՈՒՍԱՂԷՄ

Երեսուցէմ 23 Յունիս 909

Երեսուցէի ծերունակարգ ազգանքն եւ իր բոլոր կուսակալները ազգին նուիրուած Ամեն . Տէր Յարութիւն Մրրազան Պատրիարքը՝ ամեն բան մտաշատ, իր բոլոր մտադրազուճը ըրած է զժբազգ Կիւիկեցւոց սղբալի կացութիւնը եւ միշտ հոգեհան զգացմամբ կը հառաչէ « Բ՛՛՛՛ Աստուած, ա՛լ բաւ է . գու՞թգ սոխէ Հայոց ազգին վրայ . վերջ տո՛ւր Հայ ազգի տառապանքներուն . առ վշտերու մբուրով գտան տառապանքին . »

Ն. Ամենապատուութիւն Աստուծոյ զժբազգ լուրերը առած աստե՛ն, երբ ստապակալս յուզուած կ'արտասուէր, պատճառը՝ հարցուցի՛ր եւ սո՛՛ւ կղաւ իր պատասխանը « Է՛ . աղա՛ս . լացը՛ արտասուքը՛ մարդուն զգացած վիշտերու կրակին բոցը մարդը ջուրն է . մարդ կր զգացած ցուերը կա՛մ մէկուն պատմելով կը մեղմացնէ, եւ կա՛մ լալով » ինչ զգայուն բացատրութիւն .

Ն. Ամենապատուութիւն անմիջապէս հրաման ըրաւ միաբանութեան որ յանուն Կիւիկեցի կարօտեցող հանգանակութիւն մը կատարուի, եւ զայսցած կարելի գումարը զրկեց իր նպատակին ծառայեցնելու համար . Ասիկէ զատ հըրամայեց Տնօրէն Ժողովին, որ անմիջապէս Կիւիկեցի Ենօրհազարդ կաթողիկոսին դրէ, ժողովուրդաց վարժարանին մէջ գտախորակելու համար բաւականաչափ օրը զրկուելու համար .

Կիւիկեցի Ենօրհազարդ կաթողիկոսին կողմէ զրկուած որբերը, թուով տասը, Ամսոյս 23ին Երեսուցէմ հասան . Ետեօրէ թարեջան Տնտէ՛ր Գեղ . Գարեկին Մ . Վրդպ . որ յառաջ Կիւիկեցի որբերու ժամանուէրը ծանուցած ըլլալով, զպրոցաց ստժամեայ Տնտէ՛ր եւ Տնօրէն Ժողովոյ Աստուայեա Տ . կարպակ Մ . Վարդապետ, Վանուցս Հիւրընկալ Վարդապետը Պահակին ընկերակցութեամբ Երկաթուղւոյ կախարանը զրկեց . որպէս զի որբերը ամենայն հանդիսով թեմաթ Ս . Յակոբեանց վանքը առաջնորդէն .

Գանի որ այս ստիժը ներկայացուցաւ, քանի մը խօսք պիտի ընեմ Տնօրէն Ժողովի Աստուայեաթի մասին . Գեղ . Տ . կարպակ Մ . Վարդապետ Տէրաճեբան՝ իր բարեհամբոյր բնաւորութեամբ, զործուէնութեամբ, լիզուագիտութեամբ ու վարչազրաւութեամբը ամենէն ալ սիրուած է . չ'զիտցուի ինչ բանէ թեկազրուած Պօլսական թերթ մը այնքան համարձակ կը յորժանակի անոր վրայ զրպարտելով եւ բամբասանքներ յերիւրելով . Նորին Գեղարպատութիւնն էր, որ այնքան երկար տարիներ ժողովուրդաց վարժարանի տեսչութեան փափակ պաշտօնը վարեց առանց պիտեմէի սանձանէն զուրս ելլելու, եւ այնքան կարեւոր եւ օգտակար անձեր հասցուց Ս . Աթոռին .

Այնթապի առաջնորդութեամբ Ազգին ծառայեց եւ այսօր չարածիտ նախանձաններ անմոթարար կը յանդիման անոր վրայ չարախօսելու . . . .

Այժմ վերադառնանք մեր բուն նպատակին .

Կիւիկեցի տասը որբերը, ինչպէս ի վերեւ ըսի, ամսոյս 23ին Ս . Յակոբեանց վանքը հասան եւ ուղղակի ժողովուրդաց վարժարանի տեսչարանը բերուեցան . Աստուած իմ . ինչպէս նկարագրեմ բազմի ուղկիանսին կատարելի աշխատանքն մէջ ջարդ ու փշուր եղած այս փրկողներուն արատուաւից աչօք ըրած նկարագրութիւնները . ո՛ն, իրաւ որ, եթէ միմիայն լսելը այսքան զժուար է, հողա ո՛րչափ աւելի ստուկալի է, երբ մարդ այդ կարգի խճճուած թիւներու զօք կը լլայ Միւն կ'ըսէ . « Հայոս սպաննեցին . » ուրիշ մը թէ՛ « Մայրս եւ եղբայրներս կրակով այրեցին . » երբորդ մը թէ՛ « քրոջս զըլուելը փրկողին մէջ զաւանք . » եւն եւն, եթէ մարդ քարէ անդայ տրձան մը իսկ եղած ըլլայ, գործեալ անկարելի է որ զիմանայ . Աստուած անտողներուն համբերութիւնն սոյն .

Տնտէ՛ր Հայրը խոսեցնելով ինզճ որբուկները իրեն արցունքները շէր կրնար զտղել . Իսկ ես՝ որ Ներկայ էի այդ արտասուչ անտարանին . զնորհահար եղած եղջերուի նման աչքերուս անկ սիրտս կուլար եւ կը յիշէի Եսայի Մարգարէին խօսքը . ու միաբայ կը վարդապետէր . « Իսկ ո՛վ են ասանք որ վիշտերու . ճարերու . սուրբու . եւ թուրերու . երկրէն - Աստուայէն - կուտան, կարծու թիւն ձորձոց բոտորայի եւ զիւղեցիկ պատմուածանի անկ ամսին ձորձերով . » Յախանական թող խօսի Ձեզ արդարութեան եւ իրաւունքը .

Գեղ . Տնտէ՛ր Ս . Հայրը բաւական զանոնք միմիայն վերջ, հրահանուեց որբերը որ ինչ, խոնարհ ըլլան, աշխատին աւտու սորվելու, եւ Աստուծոյ ապաւինին .

Ժամը 12 ին (Ը . Թ . ) իրենց համար պարտատուած մասնաւոր ճաշի սեղանը առաջնորդեցան եւ զիմա ու բարեխնդ ճաշը Տնտէ՛րն հեռ միտարին ճաշեցին .

Յաջորդ օրը՝ տասը որբերն ալ, առաջնորդութեամբ հայր Տնտէ՛րն Ամենապատու Մրրազան Պատրիարք հոր մօտ բերուեցան, թէ՛յ ու շաքարեղէն տրուեցաւ իրենց Տէրունեան Տիրոցու Վահան եղբոր ձեռքով . Մրրազան Պատրիարքը անոնց իւրաքանչիւրին աւնունը եւ տարիքը հարցուց, զանոնք միմիայն ու քաջալիկոզ յորդորներ կարգաց թեկազրեց որ բան սորվին եւ ազգին օգտակար զաւակներ ըլլան . Մտանալու քանան ամէն գուս եւ առապանք, նաեւ աւելցուց . « զաւակներն՝ որ, սակէ վերջը եւ եմ Ձեր հայրն ու մայրը, կը բաղձամ որ ազնիւ ըլլաք, ազնիւ մեծնաք եւ ազգին յոյսերը պահէք . »

Ն. Ամենապատուութիւն Պահպանելով օրհնեց եւ համբուրեց մի առ մի եւ ըսաւ . « Աստուած Ձեզ օրհնէ, զօրացնէ ու պահպանէ, երթա՛ք բարով . »

# ՄԻՆԿԸՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿՍՅԱՅՈՒՅԻՉ Ժ . ՆԱՅՏԻՆԿԷՐ


Պալատի փողոց . Խաչնէտարի սեփականութիւն, Պրիմօլ Օթէլի ճիշտ դիմաց . Գափէ Տը Լա Պուրսի կից

Հին եւ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ՔԱՂԱՅՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՄԱՍՆԱԾԻՒԴԵՐ ԱԻՆԻ

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԷՐՆԵՐՆ ԵՆ Եւ ստոնոցմէ մինչեւ ցարգ 17,000,000 ծախուած է .

400 Է աւելի վկայական եւ մեքայներով վարձատրուած . Երաշխատեալ մեկեաններ, ԱՄԵՆԷՆ ՄԵՆ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ Փարիզի 1900 ի Տիւրքիական արտեսանանի/սի/ն մէջ ստացած է . ՀԱՅԹԱՅՈՒՅԻՉ ԵՐՈՒՍԻՈՅ ՀԱՅԹԱՅՈՒՅԻՉ ԱՆԳՂՈՑ ԿՕՅՍԵՐԱԿԱՆ ԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԻՔԻՆ ԵՒ ԹԱԳԱՆՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵԱՅ ՀԱՅԹԱՅՈՒՅԻՉ Ն . Բ . ԽՅԻՉԱԳԱՆ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՍԻՆԿԷՐԻ յաճկանքին



ԳԻՆ ՉԱՓԱՆՈՐ

## ՍԱՍՈՒՆ

ՊԱՏԿԵՐԱԶՍԵՐԻ ԱՐՄԱԹԵՐԻՉ

Ստացանք մասունքի Կրեթի թիւերն ճոխ բովանդակութեամբ, էջ 48 ութնամալ .

Տնօրէն Խաչազիրն է Տիրար Տիգրան Սիւրմէեան, Մեղամ Դիւանի Օսմ . Նախաձեռնարկ Ընկերութեան և Ուսուցիչ Հայերէնի և Աւետարական Աշխարհագրութեան . Չառ յօդուածներով պիտի խօսինք մասունքի պարունակութեան մասին . Բաժնեկիցի Պօլոյս համար 20 զրշ . Գուսաւոց համար 30 զրշ . Հասցէն է՝

Rédaction de la Revue « Sossoun » Bahdjé Capou, Yaldis Han 5-8 CONSTANTINOPLE

## ԲԱՅ ՆԱՄԱԿ

« Արշարոյս » ի բաւանորդներուն կը խնդրուի մեր մինչեւ ցարգ չ'վճարող բայց յարկելի բաժանորդներէն, որպէսզի բարեհաճին աւանց մեր ուղղակի գիմուսին սպասելու, իրենց բաժնեկիցիները զրկելու .

## ԳԻՒՐՈՒԹԻՒՆ

ԳԻՒՐՈՒԹԻՒՆ

Ալ հոյ մի՛ր՝ բնէք թէ՛ ձեր կարի մեքենաները Շախալի մը զլիւսուն վրայ զրած հոս ու հոն պիտի փոխադրէք նորոգելու համար .

Պ . Սարգիս Թաշճեան իրեն զիմոզ շատ մը յաճախողներէն քաջալիւրուած, առեկէ մը ի վեր իր պաշտօնը թողլով, յատուկ կառք պատրաստած է եւ իր շրջունն ու շարժական խառնութիւն « Վաւրոն » ին (անոր պղտիկ ձիուն անունն է) բարձած ամէն թողէ կանցնի ամէն օր եւ ամէն ժամ .

Ձինքը ճանչնալու զժուարութիւն չկայ . Պղտիկ ձիուն մը քաշած կառքին վրայ երբ մեքենաներու գործիքներ ստանէք, որուն շար կողմը ամեն լիզուով գրուած է, ամուսանող Réparation des Machines, անմիջապէս կա՛մ « Վաւրոն » յիշեցէք, եւ կամ քիչ մը անդին Սարգիս Թաշճեանը ստանելու ուղեցէք, իր կապոյտ կտակ բոսթային մէջ . անիկայ ոչ միայն կարի մեքենաներու նորոգութիւն կը ինչ անման յաջողութեամբ եւ երաշխաւորեալ, այլ եւ նոր մեքենաներ ալ կը հայթայթէ .

Չ'մտնանք նաեւ կազմ վաւարաններու եւ փոփոխութեան նորոգութիւնը եւ նորերու հայթայթումը .

Պ . Թաշճեան այս գիւրութիւնները ընծայելով իր նմաններուն ծառայած ըլլալու գոհուածութիւնը պիտի ունենայ, եւ քիչ մ'ալ զրամ շահիլ պիտի ուզէ . իր պիտակներուն զատախառնութեամբ յաւանանելու համար .

Rédaction du Journal ARCHAILOUYCE հասցեով .